

$$y = \frac{1}{2}x + 1$$

$\sigma = \frac{1}{2} + \dots$

Վարժապետի;	վարժունողն եւ ծառային ո ոճիկ տուածէ	252
Ներքին եւ արտաքին պիտոյից	50	2
					282	2

Linguistic analysis

ԱՏԵՓԱՆՈՒԹԻՒՆՆԱՅ ՏԵՐ ԱՏԵՓԱՆՆԱՍՆԱՅ.

b-4878 -A 202 3--L-L

• 1 •

ԵՐԵՎԱՆԻ

Խաղաղություն-Անշատ Երանքապահ Ետակապոն, .

Ալս օրերս Տիֆլիսարնակ իշխանուհի Վառվարէ
Թարխաննեան Բէհրութեանցն՝ և յիշատակ բար ըն-
ծայեաց իւրեանցակառոյց ճաշխիգորոյ սուրբ Աստ-
ուածածնայ եկեղեցւոյն Հայոց մի ոսկեզօծ արծաթա-
պատ Աւետարան ի սուրբ պատարազի գործադրելոյ
համար, մի հատ ընտիր կարած կարմիր մահուսեաց
ծածկոց սեղանի, եւ մեր հատ շամարան ասամեկաւ.

Սոյնպէս միաբանն Առերք Ատեփաննոսի կուսանաց անապատի Տիխոնաց աւագ սարկաւագութի Աննա Աղամալիեան Խօջամինասեանց ի յիշատակ իւրեւ ծնողաց իւրոց ընծայեաց յիշեալ եկեղեցւոյն մի խաչվառ ոսկէզօծ խաչով, մի Զայնբաղ Շարական մեծ, եւ մի միտարմսիա շահին ի ակտու Գառար,

Ուստի բաղցը պարտաւորութիւն ենք համարում
լայտոնել մեր հրապարակական շնորհակալութիւնը յի-
շեալ բարեպաշտ նուիրատուաց, մաղմեկով սուրբ կոյս
Աստուածածնից բարեխօս լինել նախախնամող Աս-
տուածոյ առաջնելը որ նա լինի վարժահատոյց նոցաքնա
քերմեռանդութեան նոդին աստ եւ ի նանակոծնամն:

Ուստի զայսմանէ ծանուցանելով Խմբագրութեանդ
խոնարհաբար խնդրիմ հրատարակել տպագրութեամբ
էջս պատուական Արարատիդ ի լուր մերոց ազգայ-
նոց:

ԱՐԴԻՇ ՔԱՀԱՆԱՅ ԵՐԻՑԵԱՆՑ.

• 25 • 07-1878 - A

ለ ቅ. የጊዜና

ՆԻԳԵՐԻՈՐՈԴՈՒՄ ՏՕՆԱՎՈՂԱԿԱՐԵԿԱՆ

Այս տարի տեղույս տօնակամակ առեւտրական գործերը յաջողակ էին, օդը մաքուր, եղանակը պարզ:

Տեղույս Հայոց սուրբ Եկեղեցւոյ Երևացիոխանը
պարոն Դազարս Դաւթեան Էջեանց Եկեղեցական
մտից եւ ծախուց գումարաց հաշիները հարագա-
տութեամբ ներկայացրեց ժողովրդոց, որոնք վերա-
հասու մնանեալ պարսն Երևացիոխանի հաւատարիմ եւ

արդիւնառ ծառայութեանց 1872 ամէ հետէ մինչեւ ցայմմ. ոչ միայն բերանացի՝ ոյլ եւ զրաւոր յարտնեցին նորան խրեանց խորին զրկունակութիւնը ի խրախոյս անցեալ եւ ապագայ ծառայութեանց:

Հոգեւորականութիւնը կատարեց իւր հոգեւոր պարտքը և հկվեցական պաշտամունքը համաձայն իւր սուրբ կրօման ի պառս Առառւծոյ եւ ի միաթարութիւն ժողովրդոց:

Digitized by Google

ՀԵՏԵԽԱՆԴԻ ՆԱԽԱՆՁՈՒԹ

Գորւց նոր Առաջնորդական Փոխանորդ
բարեշնորհ Գրիգոր Առղապետ Գառ-
նակերեանց արդին եկած լինելով՝ իւր վի-
ճակը, անցած Օգոստոսի 6ին Գորւց
սուրբ Ատեփաննոս քարաշէն եկեղեցւոյ
մէջ սուրբ պատարազի ժամանակ մի զե-
ղեցիկ և աղջու ատենաբանութիւն ուղ-
ղեց դեպ ի ժողովուրդը, զոր կթարգմաներ
Վրաց լեզուով բարեկրօն Ատեփան Քա-
հանայ Տէր Ատեփաննանց։ Քարոզեւ
Հայրը սրատարժ օրինակներով կրացա-
տրէր ուսման յարզը, օգուտը և նշանա-
կութիւնը, և անուսումնութիւննէն յա-
ռաջացած չարիքները՝ այս ինքն նախանձ,
ատեկութիւն, գողութիւն, մարդասապա-
նութիւն և լեւ օրինակ բերելով մեր Եղիշէ-
պատմազրի խօսքը թէ՝ «Եւ այս ամենայն
չարիք մտանեն ի միտս մարդոյ յանու-
սումնութիւննէ»։ Կյորդորէր ժողովուրդը
չինայել իրենց հարստութեանց մի մասը
ուսումնաբաններ բարեկարգելու, օրինա-
ւոր ուսուցիչներ բերելու և իրենց զա-
ւակները մայրենի լեզուով և բարոյակա-
նութեամբ զաստիարակիրու համար։

Արժ. Փոխանորդի այս ատենաբանութիւնը արզարե հասարակութեան ուշադրութեան արժանի գանուեցաւ, բայց թէ ի՞նչ հետեւանք պիտի ունենայ, այդ զեռ ևս անզիտելի է։ Միայն որովհետեւ խօսք նախանձու վրայ է, կշարունակեմ փոքր իշատէ նորա հետեւանքները նկարագրելու։ ‘Նախանձ’ ինչպէս որ փորձով կհաստատուի, ամեն զասակարդի մարդկանց մէջ ևս կդանուի, և այս ամենին քաջ յայտնի է, որ ուր օգտակար և բարի գործերի յաջողութիւն և յառաջադրիմութիւն է, այնտեղ կայ և նախանձ, և ուր որ նախանձ կայ, այնտեղ յառաջադրիմութիւն կիսափանի և բարեկարգութեանց իւրաքանչիւր քայլափոխի առաջ զանազան գժուարութիւններ և արգելքներ կհանդիսանանց զօր։ Նախանձուն՝ տեսնելով ազգային կամ անհնական գործի Աջ իւր ընկերի գործունելութիւնը կամ բարեմասնութիւնը, իսկոյն նորա հետ կը թշնամանայ, կմատնէ, կլրպարտէ և ամեն տեղ կվատահամբաւէ, որպէս զի նորա բարեգործութիւնները խանգարէ։ ‘Նախանձուն՝ կաշխատի իւր ընկերակիցների արժանաւորութիւնը, պատիւը, վարկը և համարումը հրապարակաւ անարդել, ունակոխ անել և արատաւորել. թէ կամենաս հաղար անզամ գովիր նրանց, բայց նա այնու ամենայնիւ կանդէ, կյարուցանէ շփոթը, կբարձրացնէ արսափելի աղաղակը, զիւահարի պէս կյարձակուի քեզ վերայ, դարձեալ կաշխատի նոցա արժանաւորութիւնը հերքելու։ ‘Նախանձուն՝ աշխատաւոր ուսուցիչները, յառաջադրէմ և ընդունակ աշակերտները կհալածէ, կնեղէ, կվշտացնէ և կյուսահատեցնէ. աշակերտ